

Ի՞նչ է էլեկտրոնային զեկուցումը:

2008 թ. նոր օրենք մտավ ուժի մեջ, որը պահանջում է բոլոր կանոնակարգվող ձեռնարկություններից և բոլոր կանոնակարգվող կառավարական գործակալություններից, այսպես կոչված Միավորված ծրագրի գործակալություններ (Unified Program Agencies [UPA]), օգտագործել Համացանցը գրանցելու պահանջվող Միավորված ծրագրի տեղեկությունը, որը ներկայումս գրանցվում է թղթային ձևերով: Այն ներառում է հիմնարկությունների տվյալները, կապված՝ վնասակար նյութերի կառավարման գործողությունների, քիմիական արտադրողական պաշարների, ստորգետնյա և վերգետնյա պահպանման ռեգերվուարների և վնասակար թափոնի արտադրման հետ: Այն նաև ներառում է UPA-ի տվյալներ, ինչպես օրինակ, ստուգումները և վերահսկման գործողությունները:

Ո՞ր դեպքում ձեռնարկությունները պետք է գրանցվեն էլեկտրոնային կերպով:

Կալիֆոռնիա նահանգի բոլոր կանոնակարգվող ձեռնարկությունները և UPA-ը պետք է օգտագործեն Համացանցը մինչև 2013 թ. հունվարի 1-ը փաստաթղթերը գրանցելու համար: Ամենավաղ էլեկտրոնային մուտքագրողները կսկսեն կիրառել նահանգային մասշտաբով համակարգը, որ կոչվում է Կալիֆոռնիայի միջավայրային զեկուցման համակարգ (California Environmental Reporting System [CERS]), 2009 թ. սեպտեմբերին: Հիմնված այն փաստի վրա, որ Ձեր UPA-ն կարող է տվյալներ ստանալ նահանգային համակարգից, նրանք կսահմանեն, թե երբ է էլեկտրոնային զեկուցումը պարտադիր տեղանքում և թղթային գրանցումն այլևս տարբերակ չէ: Երբ CERS-ն հասանելի լինի, ձեռնարկությունները կարող են կամավոր սկզբունքով օգտագործել այն մուտքագրելու և պահելու իրենց գրանցման ենթակա տեղեկությունը, սակայն կարող են շարունակել տպել ձևաթղթեր CERS-ից՝ իրենց UPA-ների հետ գրանցելու համար: Եթե Ձեզ հետ չեն կապնվել Ձեր տարածքային UPA-ի կողմից CERS-ի օգտագործման մասին տեղեկությունների առումով, խիստ թելադրելի է, որ ձեռնարկությունները կապնվեն իրենց տարածքային UPA-ի հետ լրացուցիչ տեղեկությունների համար:

Ի՞նչ է իրենից ներկայացնում էլեկտրոնային զեկուցման լրացուցիչ վճարը և որքա՞ն է այն կազմում:

Բոլոր գրանցված ձեռնարկությունները այժմ վճարում են իրենց UPA-ին նվազագույն նահանգային լրացուցիչ վճար՝ 24 ԱՄՆ դոլարի չափով: Նահանգի մասշտաբով էլեկտրոնային զեկուցումն իրականացնելու ծախսերը վճարելու համար օրենսդիր մարմինը ներկայումս բարձրացնում է նվազագույն լրացուցիչ վճարը մինչև տարեկան 25 ԱՄՆ դոլար , երեք տարվա համար: Լրացուցիչ գումարը ծախսվելու է համակարգային զարգացման, տարածման և ուսուցման ու տեխնիկական աջակցության համար, որպեսզի UPA-ները կարողանան տեղեկություններ ընդունել էլեկտրոնային կերպով: Սա նշանակում է, որ Ձեր նվազագույն նահանգային լրացուցիչ վճարը կբարձրանա տարեկան 24 ԱՄՆ դոլարից մինչև տարեկան 49 ԱՄՆ դոլար: Ձեր Վավերացված միավորված ծրագրի գործակալությունը (Certified Unified Program Agencies [CUPA]) կավելացնի այս էլեկտրոնային զեկուցման լրացուցիչ վճարը տարեկան հաշվանցման Ձեր հաջորդ երեք քաղվածքներին: Դուք կշարունակեք վճարել նահանգային լրացուցիչ վճարը Ձեր UPA-ին, Ձեր տարածքային UPA-ին վճարին կողքին:

Ինչպե՞ս կօգնի էլեկտրոնային զեկուցումը ձեռնարկություններին:

Նահանգի մասշտաբով էլեկտրոնային զեկուցումը Համացանցի միջոցով թույլ կտա հետևյալը՝

- Կանոնակարգվող ձեռնարկությունները կկարողանան հեշտությամբ պահպանել և թարմացնել իրենց կանոնակարգող տեղեկությունը:
- Միջավայրային խորհրդատուները կկարողանան էլեկտրոնային կերպով գրանցումներ իրականացնել ձեռնարկությունների համար:
- Բազմակի իրավասություններով ձեռնարկությունները կկարողանան գրանցում անել մի վայրում՝ CERS-ով մեկ:
- Ձեռնարկությունները ժամանակ կխնայեն չմշակելով և կրկին չմուտքագրելով տվյալներ, որոնք արդեն իսկ առկա են CERS - ում:
- Ձեռնարկությունները կարող են թղթերի պահպանման տարածքը խնայել, քանի որ զեկուցումը արդեն հասանելի է էլեկտրոնային թղթապանակում:
- Պատասխանատու գործակալությունները կարող են գտնել տեղեկությունը որևէ ժամանակ՝ ազատելով ձեռնարկություններին փաստաթղթերի կրկնակի գրանցման պահանջներից:

Ինչպե՞ս է սկսում ձեռնարկությունը այս գործընթացը:

Նախ, խոսեք Ձեր տարածքային UPA-ի հետ: Նրանք ավելի շատ տեղեկություն կունենան տարածքային ժամկետերի և պահանջների մասին: UPA-ները նաև կապահովեն տեղեկություններ իրենց տարածքային՝ ձեռնարկության տարածման ծրագրերի միջոցով, քանի որ էլեկտրոնային զեկուցումն իրականացվում է նահանգով մեկ: Մանրամասն օգնության էջերը, հուշող գործառնությունները և առցանց էլեկտրոնային ուսուցանող ծրագիրը նույնպես ներկառուցվելու են CERS-ում, 2010 թ. սկզբում: Ի վերջո, էլեկտրոնային զեկուցման պահանջների մասին տեղեկություններ են մշակվում Կալիֆոռնիայի միջավայրային պահպանման գործակալության (California Environmental Protection Agency [CalEPA]) կողմից և կներմուծվեն էլեկտրոնային զեկուցման կայք [www.calepa.ca.gov/CUPA](http://www.calepa.ca.gov/CUPA) հասցեով: Դուք պետք է ստուգեք Ձեր տարածքային UPA կայքը, ինչպես նաև այս մեկը լրացուցիչ տեղեկությունների համար:

Այս թռուցիկում ամփոփված տեղեկությունը հասանելի է CalEPA կայքում հետևյալ լեզուներով՝ իսպաներեն, արաբերեն, հինդի լեզվով, ուրդու լեզվով, ֆարսի լեզվով, ռուսերեն, չինարեն, կորեերեն, տագալական լեզվով, թայլանդերեն և լաոսերեն: